Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
մայիսի 23-ի N 251 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

1.	**Ծրագրի նպատակը**	«Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամի ծրագիրը նպատակ ունի նպաստել Շիրակի մարզի և Գյումրի քաղաքի առավել խոցելի ընտանիքների գործազուրկ կանանց և տղամարդկանց հնարավորությունների և ներուժի զարգացմանը՝ մասնագիտական և արհեստագործական դասընթացների անցկացման և զբաղվածության ապահովման միջոցով: Հիմնադրամի սոցիալական և կրթական ծրագիրը համայնքի զարգացման և հզորացման հիմնական միջոցն է, որի իրականացման հիմնասկզբունք է ընդունված այն դրույթը, թե այն կարող է նպաստել ոչ միայն գիտելիքների կամ մասնագիտական կարողությունների ավելացմանը, այլև անհատի սոցիալական կերպարի փոփոխությանը, զբաղվածության ապահովմանը և ուստի գործազրկության նվազմանը Շիրակի մարզում:
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	**Բարեգործը**	Իտալիայի Rete Radié Resch միջազգային համերաշխության ասոցիացիա (էլ. Հասցե՝ rrresch.noto@yahoo.it, կայք՝ http://www.reterr.it)
4.	**Ծրագիրը կատարողը**	«Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամ Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Գյումրի, 3104, Ռիժկովի 6 ՀՎՀՀ՝ 05547619

5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Իրականացման վայրը՝ Շիրակի մարզ, բնագավառը՝ սոցիալական
6.	**Ծրագրի բյուջեն**	Ծրագրի բյուջե՝ 5,879,950 դրամ
7.	**Բարեգործություն ստացողը**	Շիրակի մարզի և Գյումրի քաղաքի առավել խոցելի ընտանիքների 45 գործազուրկ կին և տղամարդ: Մասնակիցների ընտրությունը կատարվելու է Գյումրու տարածքային զբաղվածության կենտրոնի և այլ համագործակից կառույցների կողմից շահառուների ուղղորդման ու հայտարարությունների միջոցով «Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամ այցելուների ընդունման և արդյունքում հիմնադրամի սոցիալական աշխատողների հետազոտական և ընթացիկ տունայցերի կատարման միջոցով: Մասնակիցների ընտրությունը կատարվելու է նաև՝ հաշվի առնելով իրենց հետաքրքրվածությունը, համապատասխան մասնագիտական ոլորտում հետագայում աշխատելու ցանկությունը և առկա նախնական գիտելիքները: Բարեգործություն ստացող են հանդիսանում նաև նախակրթարանի և ցերեկային խնամքի կենտրոնների 3-6 տարեկան և 10-15 տարեկան 75 սան, ովքեր օրական 1-2 անգամ սնվում են «Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամում:
8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	2020 թվականի մարտի 23-ից մինչև դեկտեմբերի 31-ը
9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	Սարքավորումների ձեռքբերում, Երևանից Գյումրի տեղափոխում և մոնտաժում՝ 2,475,950 դրամ (ապրիլ-հունիս) Մասնագիտական ուսուցումների անցկացում՝ 3,404,000 դրամ (հունիս-նոյեմբեր), որից 644,000 դրամ դասընթացավարների աշխատավարձ:

10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	Խոհարարական սարքավորման ձեռքբերում, Երևանից Գյումրի տեղափոխում և մոնտաժում՝ ՝ 2,475,950 դրամ (ապրիլ-հունիս) «Խոհարարություն», «Թխվածքների պատրաստում և ձևավորում», մասնագիտական ուսուցումների անցկացում՝ 2,723,200 դրամ (հունիս-նոյեմբեր) Դասընթացավարների աշխատավարձ՝ 644,000 դրամ Հումքի ձեռքբերում՝ 1,320,000 դրամ Կոմունալ ծախսեր՝450,000 դրամ Տրանսպորտային ծախսեր՝ 219,200 դրամ Ուսուցումների մասնակիցների սուրճի ընդմիջման կազմակերպում՝ 90,000 դրամ Գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում:
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**	Ադմինիստրատիվ ծախսեր՝ 680,800 դրամ Ծրագրի ղեկավարի աշխատավարձ՝ 342,000 դրամ Հաշվապահի աշխատավարձ՝ 270,000 դրամ Նյութատեխնիկական ապահովում՝ 68,800 դրամ
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Նախատեսվում է համագործակցել՝ Գյումրու քաղաքապետարանի և Շիրակի մարզպետարանի հետ և շահառուներին աջակցության դեպքում ուղղորդել այնտեղ: Գյումրու տարածքային զբաղվածության կենտրոնի հետ, ընդունել սոցիալապես խոցելի ընտանիքներին որպես ծրագրի շահառուներ և վերապատրաստված մասնագետներին ուղղորդել այնտեղ, միջնորդել թափուր աշխատատեղերի առկայության դեպքում: Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի հետ և համատեղ կազմակերպել մասնագիտական ուսուցումներ Հրուշակեղենի գործարանների, սրճարանների, ռեստորանների, գեղեցկության սրահների հետ՝ վերապատրաստված մասնակիցներին աշխատանքի տեղավորման հարցում աջակցելու համար:

13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է՝ «Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամի տնօրենը, ծրագրային գործունեության պատասխանատուն, սոցիալական աշխատողները, հոգեբանը և դասընթացավարները՝ զրույցների, գիտելիքների ստուգման թեստերի, դասընթացների որակի վերաբերյալ գնահատման թերթիկների միջոցով, Իտալիայի Rete Radié Resch միջազգային համերաշխության ասոցիացիա՝ այցերի և հաշվետվությունների, ինչպես նաև լուսանկարների տեսքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ